Գավառի ավագ դպրոց

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աշակերտների գիտելիքների ստուգման նպատակը և ձևերը դպրոցական դասընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Մանուշ Եսայան

Ղեկավար՝ Թերեզա Ղարաբաղցյան

Գավառ 2022

Բովանդակություն

Ներածություն……3

1. Աշակերտների գիտելիքների ստուգման նպատակը և ձևերը դպրոցական դասընթացում

1.1Աշակերտների գիտելիքների ստուգման նպատակը……..4

1.2 Աշակերտների գիտելիքների ստուգման ձևերը……11

Եզրակացություն……..25

Գրականության ցանկ……..26

Ներածություն

'Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն, այլ նրա մտքերն ու ձեռքբերումները':

Արսեն Վենգեր

Սովորողների գիտելիքների և կարողությունների ստուգումը ուսումնական գործընթացի կարևոր մասն է, քանի որ թույլ է տալիս ուղղակի կապ հաստատել ուսուցման մեթոդների, անցած նյութի յուրացման որակի, հետևաբար և ուսուցման գործընթացի հետագա բարելավման միջև:

Գիտելիքը կառուցվում է վաղ մանուկությունից և ուղեկցում է անձի զարգացման գործընթացին՝ ազդելով նրա վարքի և խնդիրներ լուծելու ունակության վրա:

Գիտելիքը ծագում է զգայական ընկալման միջոցով որտեղից հասնում է հասկացության:

Գիտելիքը առաջին հերթին պետք է լինի երեխայի տարիքին համապատասխան: Երեխան պետք է հնարավություն ունենա կիրառել, փորձել և ստուգել իր գիտելիքը, ինչպես նաև կարողանա օգտագործել դրա հնարավորությունները:

Աշակերտների կողմից գիտելիքների յուրացման ընդհանուր պատկերը ստանալու համար անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր փոխկապակցված եղանակներ, որոնց թվին են պատկանում տնային աշխատանքը, բանավոր հարցումը, ինքնագնահատումը և փոխադարձ գնահատումը, խմբային աշխատանքը, կարճ ժամանակ պահանջող գրավոր աշխատանքը, ծավալուն գրավոր աշխատանքը, գործնական աշխատանքը, դիագնոստիկ (հայտորոշիչ) գնահատումը, ինքնուրույն հետազոտությունը, ամփոփիչ աշխատանքը և այլն:

Գնահատումն տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի ո՞ր աստիճանին է հասել սովորողը: Գնահատմանն ուղղված ցանկացած աշխատանք պետք է կատարվի խիստ որոշակի նպատակով: Ամեն անգամ, երբ ուսուցիչն իրականացնում է գնահատման հետ կապված որևէ գործընթաց, նա պետք է իրեն հարց տա.

- «Ու՞ր եմ գնում(որո՞նք են նպատակները)»,
- «Ինչպե՞ս եմ գնում(ի՞նչ առաջընթաց կա դեպի այդ նկատակը)»,
- 'Ո՞րն է հաջորդը(ի՞նչ գործողությունների միջոցով պենք է առաջընթաց գրանցես):

Աշակերտների գիտելիքների ստուգման նպատակը և ձևերը դպրոցական դասընթացում

1.1 Աշակերտների գիտելիքների ստուգման նպատակը

Գնահատման հիմնական նապատակը սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ու տիրապետման աստռիճանի, նրաց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև որակի բարելվումը և վերահսկումը:

Գնահատումն տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Ուսումնական գործընթացում գնահատումը նշանակում է նաև քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքում: Ուսուցիչների համար գնահատման նպատակը, սովորաբար, աշակերտների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է: Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է աշակերտների առջև ծառացած դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում: Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո՝ ելնելով սովորողների արդեն ձեռք բերած գիտելիքներից, նա ընտրում է ուսուցումը շարունակելու ճիշտ տեղը: Գնահատմանն ուղղված ցանկացած աշխատանք պետք է կատարվի խիստ որոշակի նպատակով: Ամեն անգամ, երբ ուսուցիչն իրականացնում է գնահատման հետ կապված որևէ գործընթաց, նա պետք է իրեն հարց տա. «Ի՞նչ նպատակով եմ ես սա անում», «Ինչպե՞ս եմ օգտագործելու արդյունքները»:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի՝ գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում ենթեմաներ:

Հանրակրթության ոլորտում կիրառվում են արտաքին և ներքին գնահատումներ, որոնց առանձնահատկությունները բերված են հետևյալ աղյուսակում.

Արտաքին գնահատում	Ներքին գնահատում
Իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Հիմք է հանդիսանում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելության մրցույթին մանակցելու համար: Բացահայտում է ուսումնական գործընթացի ամբողջական (կամ որևէ առարկայից) արդյունքն առանձին դպրոցում, մարզում կամ հանրապետության որջ տարածքում: Կիրառվում է որոշակի բնագավառում տարբեր երկրների կրթական ձեռքբերումները համադրելու և ընդհանրական մոտեցումներ ձևավորելու նպատակով:	Կիրառվում է դպրոցում՝ բանավոր հարցման, ուսուցողական և ստուգողական գրավոր աշխատանքների միջոցով: Իրականացվում է անհատական, խմբային, ինքնագնահատման եղանակներով: Հիմք է հանդիսանում յուրաքանչյուր սովորողի, ինչպես նաև առանձին դասարանի ուսումնական ձեռքբերումների ամփոփման համար: Կիրառվում է սովորողների կրթական կարիքների բացահայտման, ուսումնական պրոցեսի կազմակերպման բարելավման, կիրառվող մեթոդների վերանայման և կրթության որակի բարելավմանն ուղղված այլ գործընթացների պլանավորման համար:

Ներքին (ներդպրոցական) գնահատումը հանրակրթության գնահատման համակարգի առաջնային և կարևոր մասն է: Այն իրականացվում է ուսուցչի, ուսմասվարի, տնօրենի ամենօրյա աշխատանքի ընթացքում և նպատակ ունի բացահայտել սովորողների կողմից ուսումնասիրվող նյութի յուրացման և պահանջվող կարողությունների ձևավորման աստիճանն անմիջապես դասապրոցեսի ժամանակ:

Այդ նպատակին հնարավոր չէ հասնել կիրառելով ստուգման մեկ կամ երկու որոշակի եղանակ: Աշակերտների կողմից գիտելիքների յուրացման ընդհանուր պատկերը ստանալու համար անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր փոխկապակցված եղանակներ, որոց թվին են պատկանում տնային աշխատանքը, բանավոր հարցումը, ինքնագնահատումը և փոխադարձ գնահատումը, խմբային աշխատանքը, կարճ ժամանակ պահանջող գրավոր աշխատանքը, ծավալուն գրավոր աշխատանքը, գործնական աշխատանքը, դիագնոստիկ (հայտորոշիչ) գնահատումը, ինքնուրույն հետազոտությունը, ամփոփիչ աշխատանքը և այլն:

Գնահատման այս եղանակները կիրառվում են ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու կամ ընթացիկ առաջադիմության ցուցանիշները պարզելու համար:

Պետական ամփոփիչ գնահատումը, ի տարբերություն ընթացիկ գնահատման, կազմակերպվում է կենտրոնացված կարգով, ինչը կրթության պատասխանատուներին և ուսումնական հաստատությունների ղեկավարներին հնարավորություն է տալիս հստակ հետևել գիտելիքների մակարդակին ինչպես կրթական համակարգում, այնպես էլ, մասնավորապես, յուրաքանչյուր դպրոցում:

Գնահատման նպատակները

Ի՞նչ նկատի ունենք գնահատման նպատակ ասելով.

Գնահատման նպատակը նկարագրում է, թե ինչի համար է սովորողը գնահատվում, ինչպես պետք է գնահատման արդյունքները մեկնաբանվեն և ինչպիսի որոշումներ պետք է կայացվեն դրա հիման վրա:

Գնահատմանն ուղղված ցանկացած աշխատանք պետք է կատարվի հատուկ նպատակով: Երբ էլ, որ իրականացնելու լինենք գնահատումը, պարտավոր ենք մեզ հարց տալ.

- Ո՞ւմ ենք գնահատում:

- Ինչպիսի՞ գիտելիքներ և հմտություններ ենք ստուգում:
- Ինչպե՞ս ենք օգտագործելու արդյունքները:
- Ի՞նչ որոշում ենք կայացնելու արդյունքների հիման վրա:

Երբեմն գնահատումը կարող է հետապնդել ավելի քան մեկ նպատակ: Օրինակ՝ միասնական քննությունները կոչված են վկայագրելու սովորողի առաջադիմությունը միջնակարգ դպրոցն ավարտելիս, ինչպես նաև դիմորդների մեջ կատարելու՝ բուհ ընդունվողների ընտրություն:

Հայաստանի Հանրապատության հանրակրթությունում այժմ գործում է գնահատման երկու հիմնական ձև՝ ***միավորային*** և ***ուսուցանող***:

Միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու, հաշվառելու միջոցով: Այն պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու սովորողի իրական կարողությունները:

Միավորային գնահատման տեսակներն են՝

- բանավոր հարցում,
- գրավոր աշխատանք,
- թեսթ,
- գործնական աշխատանք,
- թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանք.
- ուսումնական նախագիծ:

Ամփոփիչ գնահատում՝ սովորողների ձեռքբերումների գնահատումն է ուսումնառության մի որոշակի հատվածում՝ առկա մակարդակը գրանցելու ու հրապարակելու նպատակով: Ամփոփիչ գնահատումը տեղեկություններ է պարունակում միաժամանակ ուսուցման մի քանի բաղադրիչների մասին՝ սովորողների ձեռք բերած գիտելիքների, նրանց մեջ ձևավորված կարողությունների ու հմտությունների, դրսևորած վերաբերմունքի, հիմնական գաղափարների ընկալման մակարդակի ու վարքի ձևերի մասին, ինչպես նաև կենտրոնական գաղափարի ընկալման խորության վերաբերյալ և խթանում է սովորողների գործողությունները:

Ուսուցանող/ձևավորող/ գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված դժվարությունների և սխալների բացահայտման ու դրանց հաղթահարման համակարգված գործընթաց է:

Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է տեղեկությունների հավաքագրման և արժեվորման միջոցով ուսումնական չափորոշիչների, ծրագրերի ու մեթոդների բարելավվումը:

տեղեկություն ստանանք այն մասին, թե ինչպես կատարելագործենք նրա կողմից նյութի յուրացումը:

Ձևավորող գնահատման բաղադրիչներն են.

- Սովորողի գործուն մասնակցությունը սեփական ուսումնասիրությանը,
- Սովորողի ուսումնական գործընթացի շտկում,
- Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- Սովորողի մոտիվացիայի ապահովումը,
- Հետադարձ կապի ապահովում:

Ամփոփիչ և ձևավորող գնահատումների նպատակները

Ամփոփիչ գնահատում	Ձևավորող գնահատում
Ուսումնառության ընթացքում սովորողի առաջադիմության գնահատում՝ թեմայի, կիսամյակի և տարվա ամփոփման նպատակով	Հայտորոշում, երբ գնահատման արդյունքներն օգտագործվում են սովորողի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու նպատակով, որպեսզի դրանք վերացվեն և սովորելու հետագա ընթացքը բարելավվի:
Ատեստավորում. երբ արդյունքներն օգտագործվում են ուսումնառության համապատասխան ժամանակահատվածի վերջում սովորողներին ավարտական վկայական կամ ատեստատ տրամադրելու նպատակով:	Արժևորում, երբ գնահատման արդյունքներն օգտագործվում են ուսումնական ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով, որպեսզի այն հետագայում կատարելագործվի:

Ընտրություն, երբ ուսումնառությունն ավարտելուց հետո արդյունքներն օգտագործվում են դիմորդների սահմանափակ քանակ ընտրելու և ընդունելու նպատակով	

Դպրոցական ընթացիկ գնահատումը չպետք է ունենա միայն տվյալ պահին աշակերտների ձեռք բերած այս կամ այն գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակների վերաբերյալ վճիռ կայացնելու նպատակ: Այն (և առհասարակ ցանկացած ներքին գնահատում) պետք է ուղղված լինի գլխավորապես աշակերտների մեջ ուսումնական դրդապատճառների առաջացմանը՝ անհատական իմացական որակները բարձրացնելու անհրաժեշտությունը գիտակցելու ճանապարհով: Դպրոցական ընթացիկ գնահատումները պետք է հետապնդեն առավելապես ուսուցողական նպատակ:

Գնահատման բոլոր ձևերն ու տեսակները նպատակ ունեն.

ա. խթանելու սովորողի զարգացումը՝ թե՛ գնահատման անմիջական ազդեցությամբ, թե՛ դրանից արվող մանկավարժական հետևությունների և քայլերի միջոցով,

բ. արձանագրելու սովորողի առաջընթացը կամ դժվարությունները՝ իր հնարավորությունների համեմատ, առանց մյուս սովորողների հետ համեմատելու,

գ. անհատականացնելու ուսուցման և դաստիարակության արդյունքների բացահայտման ընթացքը, խրախուսել սովորողի ցուցաբերած իմացությունը,

դ. սովորողի և ծնողի համար արտացոլելու առկա հաջողություններն ու խնդիրները և ձևավորելու սովորողի մոտ անաչառ ինքնաճանաչման ձգտումն ու դրա համար անհրաժեշտ՝ ինքնագնահատման ընդունակությունը,

ե. նպաստելու սովորողի՝ սեփական ուժերի նկատմամբ վստահության ձեռքբերմանն ու ամրապնդմանը, վախի հաղթահարմանը, դասարանում և դպրոցում դրական և համագործակցային մթնոլորտի հաստատմանը,

զ. ապահովելու զարգացման հավասար պայմաններ բոլոր սովորողների համար՝ անկախ անհատական առանձնահատկություններից, ընդունակություններից և սոցիալական վիճակից,

է. ապահովելու երջանիկ և առողջ մանկության համար կարևոր նախադրյալները՝ դրական

տեսանկյունից նկատված և գնահատված լինելու երեխայի բնական ձգտումն ու իրավունքը և ուրախությամբ, հաճույքով սովորելու ցանկությունը,

ը. օգնելու դպրոցին, ուսուցչին և սովորողին՝ սեփական աշխատանքի գնահատման և բարելավման, ստեղծագործաբար վերաբերվելու հարցում,

թ. որոշելու սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի համապատասխանության աստիճանը ակնկալվող վերջնարդյունքներին, խթանելու սովորելու ձգտումը՝ դեպի ավելին հասնելու, կրթության որակը բարելավելու:

1.2 Աշակերտների գիտելիքների ստուգման ձևերը

Ուսուցանող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերն ու տարատեսակները՝

1. Կարճ ժամանկի համար նախատեսվող առաջադրանք,
2. Բանավոր հարցում
3. Բաց հարցերով քննարկում
4. Ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք
5. Գործնական աշխատանք, կիրառություններ
6. Խմբային աշխատանք, համագործակցություն, նախագիծ
7. Տնային առաջադրանք
8. Ինքնագնահատում
9. Փոխադարձ գնահատում
10. Ռեֆերատ

1. Կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք

Այս առաջադրանքի նպատակն է՝ պարզել ենթաթեմայի, նոր գաղափարի և ուսումնական առարկայի փոքր մասերի տիրապետման աստիճանը Կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանքները կարող են լինել տարբեր տեսակների և դրանք կարելի է կիրառել՝ կախված ուսումնակն առարկայի առանձնահատկություններից, թեմայից և նպատակից Այդպիսիք են թելադրությունն ու շարադրությունը, թեստը, գործնական աշխատանքը, պատրաստի գծագրերով առաջադրանքի կատարումը, համառոտագրումը

Այս տիպի աշխատանքն արվում է յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելու ընթացքում երկու անգամ

2. Բանավոր հարցում

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած

գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին: Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողների ձեռքբերումները հետևյալ ուղղություններով

- բանավոր խոսք
- վերարտադրություն
- հաղորդակցությոթւն
- համագործակցություն
- լեզվամտածողություն
- գիտելիքի յուրացում
- տրամաբանություն
- ստեղծագործական մտածողություն
- ուսումնական գործունեություն ցուցաբերելու (մոդելավորելու) կարողություններ:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ

- հարցման միջոցով
- աշակերտների ուղղված բանավոր հարցերի միջոցով
- տնային աշխատանքների ստուգմամբ
- համագործակցային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

1. Ակադեմիական գիտելիքի իմացություն
2. Կիրառելու կարողություն
3. Ներկայացնելու կարողություն
4. Ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն
5. Միջառարկայական կապ ստեղծելու կարողություն:
6. Ակադեմիական գիտելիքի իմացություն
7. Կիրառելու կարողություն
8. Ներկայացնելու կարողություն

9. Ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն

10. Միջառարկայական կապ ստեղծելու կարողություն:

Բանավոր հարցման դեպքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- Հարցերն օգտագործել՝ բացահայտելու նպատակով, թե ինչ գիտի աշակերտը, ինչպեսէ հասկանում և ինչ կարող է անել,
- Վերլուծել աշակերտի պատասխաններն ու հարցերը, որպեսզի բացահայտվի, թե ինչգիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- Հարցերն օգտագործվեն՝ աշակերների հատկանշական թերըմբռնումները պարզելուև հետագա ուսուցումը բարելավելու համար,
- Աշակերտի հարցերն օգտագործվեն նրա ըմբռնողունակությունը գնահատելու նպատակով:

Այդ նպատակներն իրագործելու համար շատ կարևոր է գտնել և օգտագործել առավել արդյունավետ հարցեր և նպատակին հասնելու ձևեր:

Օրինակ, ուսուցիչը ստորև նշված առաջադրանքի միջոցով փորձում է պարզել թե որքան է աշակերտը յուրացրել նյութը.

Թվագրիր քարտերն ըստ գործվածքի տեսակի ստացման հաջորդականության.

ա)

գործվածք	**բույս**	**հումք**	**մանվածքաթել**	**սերմ**

բ)

կենդանի	**գործվածք**	**հումք**	**մանվածքաթել**	**ծառ**

Կարելի է կազմել արդյունավետ հարցադրումների տեսակների աղյուսակ և օգտագործել Օրինակ՝

- Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ. . .
- Ի՞նչն է նույնը և ի՞նչն է տարբեր. . . ,
- Մի՞շտ է ճիշտ/ սխալ, որ. . . ,
- Ինչպե՞ս կբացատրեք. . . ,
- Ի՞նչն է սխալ. . . ,
- Ինչու՞ է ճիշտ. . . , և այլն

Բանավոր հարցման միջոցով կարելի է պարզել ուսուցանված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի տիրապետման աստիճանը: Դա կարելի է անել առանձին աշակերտների հարցմամբ կամ դասարանին ուղղված հարցով Այդ միջոցներով պարզվում են սովորողների լեզվամտածողությունը, հաղորդակցվելու կարողությունը, տրամաբանությունը և արագ կողմնորոշվելու հատկությունը Վիճակը ճշտելուց հետո ուսուցիչը ծրագրում է նկատված թերությունները վերացնելու հետագա աշխատանքները: Բանավոր հարցումներն օգտակար են հատկապես ուսումնական նոր նյութն աշակերտներին բացատրելուց հետո:

Աշակերտի ձեռքբերումների արժևորման համար կողմնորոշիչ հարցեր տալուց հետո շատ կարևոր է աշակերտի պատասխաններն ուշադիր լսելը և դրանց մեկնաբանելն ու վերլուծելը Երբեմն աշակերտի տված հարցերից կարելի է հետևություններ անել, թե որքանով է նա կարողացել հասկանալ ուսումնական նյութը, ինչն է բնորոշ նրա թերըմբռնումներում:

3. Բաց հարցերով քննարկում

Բաց հարցերի թվին են դասվում նրանք, որոնք ենթադրում են անհատական մոտեցումներով, տեսակետներով և կարծիքներով պայմանավորված պատասխաններ, մեկնաբանություններում համեմատաբար ծավալուն են և ուղղորդման կարիք քիչ ունեցող: Բաց հարցերով քննարկումների նպատակն է՝ աշակերտին ներգրավել առաջադրված հարցի պատասխանի շուրջ ծավալվող քննարկումների մեջ Այստեղ է դրսևորվելու նրա տեսակետ կամ սկզբունք ունենալը, ինչպես նաև այլ կարծիքներ լսելու, հասկանալու և քննադատական մոտեցում ցուցաբերելու կարողությունը: Դրսևորած ինչ-որ տեսակետի հետ աշակերտը կամ համաձայնում է, կամ հերքում, կամ այլընտրանքային պատասխան ներկայացնում Ի տարբերություն փակ հարցերի, որոն ունեն միարժեք պատասխան, բաց հարցերը միարժեք պատասխան չունեն Այդտեղ ի հայտ են գալիս մտքի խորությունը, տեղեկացվածությունը, ընդհանուր զարգացվածությունը և մտածողությունը: Բաց հարցերով քննարկումների թեմաներ կարող են լինել ազգային, մշակութային, հոգևոր զարգացման, բարոյականության և ճիշտ արժեքային համակարգ ձևավորող առաջադրանքները: Առարկայական մասում բաց հարցեր կարող են լինել որևէ գաղափարի մեկ այլ կամ համարժեք սահմանում տալը, դրանց համեմատական վերլուծության հետ կապված կամ այլ տիպի քննարկումներ ծավալելը: Բաց հարցեր առաջարկում է ուսուցիչը

կամ աշակերտը:

Բաց հարցի օրինակ՝ իմանալով բազմանկյունների նմանությունը՝ փորձեք գտնել քառանկյունների համար նմանության հայտանիշներ:

Այդպիսի հարցերի քննարկումները կնպաստեն աշակերտի վերլուծական և տրամաբանական մտածողության զարգացմանը, ինչպես նաև ներգրավվածության հատկության ձեռքբերմանը: Այդ քննարկումները կարելի է կազմակերպել դասի ընթացքում կամ դրանից դուրս՝ կախված առաջադրվող հարցի ակնկալվող պատասխանից: Բարենպաստ մթնոլորտում նման աշխատանքները հաճելի են դառնում աշակերտների համար, իսկ դրանց հաճախակիությունը՝ ցանկալի:

4. *Ինքնուրույն կատարման համար ուսումնական առաջադրանք*

Այս առաջադրանքի նպատակն է՝ պարզել աշակերտի անհատական աշխատանք կատարելու կարողությունը, առարկային տիրապետելու մակարդակը, հետազոտական-վերլուծական ունակությունը և գրականությունից օգտվելու կարողությունը:

Ինքնուրույն աշխատելու համար աշակերտին կարելի է հանձնարարել որոշակի առաջադրանք՝ գործնական, ռեֆերատ, դեռևս չուսուցանված դասի պատրաստում և ստեղծագործական աշխատանք: Ուսուցիչը կարդում, ուսումնասիրում և գրախոսում է աշխատանքն ու այն քննարկում աշակերտի հետ: Տնային առաջադրանքներից բացի, ինքնուրույն կատարման այլ աշխատանքներն առավել կարևոր է հանձնարարել բարձր դասարանների աշակերտներին, հատկապես մասնագիտացված հոսքային խմբերում: Ցածր դասարաններում կարելի է հանձնարարել գործնական աշխատանքներ:

5. *Գործնական աշխատանք և կիրառություններ*

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական-կիրառական նշանակությամբ:

Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և

հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն):

Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ:

Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նար ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես ուսումնական թեմաների ուսուցմանն ուղեկցող պահանջներ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթությանշարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Սովորողների ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով
2. մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,
3. դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր(ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնա-յին ներկայացումներ և այլն),
4. լաբորատոր աշխատանքների կատարում,
5. Կատարած գործնական աշխատանքի համար սովորողները գնահատվում են միավորներով: Դրանք կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում կատարելու համար:
6. Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով:
7. Առաջինը՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով:

8. Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և, անհրաժեշտության դեպքում կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար նախատեսված առանձին տետրում, որն ուսուցիչն ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականցվող գործնական աշխատանքներն անցկացվում են խմբայինմեթոդների կանոններով:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարներիու փաստերի ըմբռնման աստիճանը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողութունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Թեմատիկ գրավոր աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է ,որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր:

Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքները՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կամ գործնական:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,

- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ստեղծագործական մոտեցում

պահանջող,կամ դրանց համադրմամբ:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն:

Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով:

Կարևոր է կարճաժամկետ գրավոր աշխատանքները, որոնց տրման նպատակն է որոշել ուսումնասիրված թեմաներից սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ու դրա հիման վրա կատարել եզրահանգումներ և պլանավորել անհրաժեշտ քայլեր:

Կիսամյակային ամփոփիչ ստուգում

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքի նպատակն է՝ պարզել կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք բերած գիտելիքի և կրթության բովանդակության, կարողություններ ու հմտություններ բաղադրիչի մակարդակը, ինչպես նաև պարզել կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կարող է իրագործվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Հարցման ձևը որոշում են առարկայական մասնագետներն ու տնօրինությունը:

Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքին տրվող ժամանակը որոշվում է՝ կախված ուսումնական առարկայից: Աշխատանքին տրվող ժամանակը պետք է համապատասխանի թեստի առաջադրանքները կատարելու աշակերտի

հնարավորություններին:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը պետք է պարունակի չափորոշչով նախատեսված բոլոր բարդության առաջադրանքներ և ընդգրկի ամբողջ կիսամյակի ընթացքում անցած նյութը: Ընդ որում, թեստը պետք է պարունակի ստուգվող նյութի առաջին և երկրորդ աստիճանի բարդության առաջադրանքների ընտրությունը, կախված թեստի ծավալից և թեմաներից, թողնվում է թեստը կազմողին:

Թեստը պետք է ապահովի աշակերտի առավելագույն, և չափորոշչային նվազագույն գիտելիքներ ունեցող աշակերտի՝ անցումային, միավոր ստանալու հնարավորությունը:

Թեստի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար տրվում է առանձին միավոր, նշվում է գնահատման քայլը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ:

Թեստի առաջադրանքների կատարման համար տրվող գումարային առավելագույն միավորը կարող է տարբեր լինել 10-ից: Այդ դեպքում գումարային միավորը պետք է բերել 10 միավորային համակարգի:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կպարտավորեցնի աշակերտին լինել ուշադիր, ուսուցանվող նյութը սովորել հիմնովին և մտապահել: Դա կնպաստի աշակերտի մոտ մնացորդային գիտելիքի ավելացմանը; Դրանով կիսամյակային ամփոփիչ աշխատանքի միավորային գնահատումը դառնում է կրթության որակի բարելավման մի կարևոր գործոն:

6. Համագործակցային աշխատանք

Համագործակցային կամ խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին աշխատել խմբերով՝ բացահայտելու և դրսևորելու իրենց անհատականությունը, համատեղ աշխատանքին մասնակցելու ունակությունը և համագործակցելու կարողությունը:

Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր գիտելիքների յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևոր է հետաքրքրաշարժ ուսումնական նյութի ընտրությունը, դրա մշակման, յուրացման և կիրառման գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերումն ու զարգացումը: Դա իր հերթին ենթադրում է սովորողների արդյունավետ համագործակցություն և սովորելու գործընթացն ինքնուրույն կազմակերպելու կարողությունների զարգացում: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սովորել սովորեցնել:

Համագործակցաին ուսուցման դիպուկ բանաձև է Սենեկայի այն միտքը, որ

սովորեցնողը սովորում է կրկնակի: Այդ պարագայում, սովորողը երկու դեպքում էլ շահում է՝ երբ լսում և սովորում է ուրիշից, ինչպես նաև, երբ սովորեցնում է ուրիշին: Եթե ուսուցիչը կարողանա համագործակցային աշխատանքների հայտնի ձևերով կամ իրավիճակից ելնելով՝ յուրովի կազմակերպել աշակերտների միջև սովորել- սովորեցնելու իրավիճակ, ապա կարելի ասել, որ համագործակցային աշխատանքը հաջողված է: Համագործակցային աշխատանքում պետք է մասնակցեն խմբի բոլոր անդամները, և յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ընդհանուրի հաջողությունը պայմանավորված է իր մասնակցությամբ, իսկ իր հաջողությունը՝ մյուսների: Խմբային աշխատանքը նպաստում է աշակերտի սոցիալականացմանը, մտածողության ճկունացմանը, գիտելիքների, տրամաբանական մտածողության դրսևորմանը:

Աշխատանքը ավարտելուց կամ դրա համար նախատեսված ժամանակը սպառվելուց հետո վերլուծվում և քննարկվում է աշխատանքի ընթացքը, և յուրաքանչյուր աշակերտի՝ մասնակցության և ներդրման չափը: Դիտարկումներն ընդհանրացնելով՝ ներկայացնում են որպես խմբի համար հետադարձ կապ: Դա օգնում է դիտարկումներից եզրակացություն անել, թե որքանով է արդյունավետ գործել խումբը, և թե ինչպես բարելավել համագործակցությունը:

Խմբային աշխատանքը կարելի է կատարել ուսումնական որևէ թեմա անցնելուց հետո: Համագործակցային աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը կարող է նաև թեստ հանձնարարել, գնահատել և արդյունքները վերլուծելով՝ պարզել յուրաքանչյուր խմբի և դասարանի համագործակցային աշխատանքի արդյունավետությունը: Ուսուցիչը պետք է լսի խմբի անդամների կարծիքը սեփական աշխատանքի և խմբի ներսում ընկերների հետ համագործակցության վերաբերյալ, և կատարված աշատանքի համար աշակերտին տա որակական, նպատակահարմարության դեպքում նաև՝ քանակական գնահատական:

7. Տնային աշխատանք

Սովորելը խթանելու արժեքավոր միջոց է տնային աշխատանքների դերի բարձրացումն ու դրանց նկատմամբ մոտեցումների ճշգրտումն ու համակարգումը: Դպրոցներն ու կրթության կազմակերպման այլ ձևերը չեն կարող լիարժեք ապահովել դասապրոցեսից հետո սովորողի ուսումնառության շարունակությունը դպրոցում: Աշակերտն իր անհատական կամ համագործակցային աշխատանքները կատարելու է նաև տանը:

Ուսուցիչը դասի ընթացում կամ դասից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները:Տնային հանձնարարությունները պետք է լինեն այնպիսի ծավալի, որ դրանց կատարման համար աշակերտը ծախսի միջին հաշվով շաբաթական ժամաքանակի կեսից ոչ ավելին: Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, քանի որ դա կօգնի աշակերտին լավ յուրացնել տվյալ ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնել ի հայտ եկած թերությունները:

8. Ինքնագնահատում

Աշակերտի կրթական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնեու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

Որպեսզի հստակ ընկալվի, թե ինքնագնահատումը որքանով կարող է նպաստել աշակերտի լավ սովորելուն, անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռնել և օգնել՝ անդրադառնալու հետևյալ հանգամանքներին.

- որպես մտածող և սովորող՝ ինքուրույն պարզելու իր գիտելիքի մակարդակը,
- առաջադրանքը հստակ պատկերացնելուն,
- փնտրելու ուսման որակը բարելավելու միջոցներ, և մշակելու դրանք կիրառելու ռազմավարությունը:

Ինքնագնահատման նպատակն է՝ ընդլայնել աշակերտի ճանաչողությունը, ինքնաճանաչումը, արժեքային համակարգի շրջանակները, ինչպես նաև արմատավորել պատասխանատվության գիտակցումը: Առաջադրանքի վերլուծությունից հետո կարևոր է, որ աշակերտը տեսնի և հասկանա իր թերությունները և դրանց շտկման համար դրսևորի ձգտում, կարողություն ու կամք. Օրինակ, եթե ուսուցչի հետ միասին կարդում են շարադրությունը, և աշակերտը կարողանում է նկատել իր սխալներն ու թերությունները և ասել, թե այժմ ավելի ճիշտ ու լավ ինչպե՞ս կգրեր, դա կլինի ինքնագնահատման մի դրսևորում:

Որպեսզի ուսանելը լինի արդյունավետ, սովորողին պետք է հասցնել այն

գիտակցության, որ նրա դատողությունը միտված լինի նվազեցնելու իր ձեռքբերումների առկա և նախատեսված պաշարների միջև եղած տարբերությունը: Այդպիսի որակներով օժտված աշակերտն ուսուցչի օգնությամբ կարող է վերացնել իրական և ցանկալի վիճակների միջև եղած ճեղքվածքը:

Եթե աշակերտն իրականում կատարի ինքնագնահատման աշխատանքները, ապա դա նրան կօգնի պատկերացում կազմել իր կարողությունների ու մակարդակի մասին:

Աշակերտն աստիճանաբար պետք է պատասխանատու դառնա իր սովորելու համար: Եթե հնարավոր լինի սովորողին հասցնել մտածողության այդպիսի աստիճանի, ապա դա կլինի լավագույն միջոցը, որը կխթանի ձեռքբերումների ավելացման նրա ձգտումը և, հետևաբար, կնպաստի կրթական որակի բարելավմանը:

Եթե աշակերտը կատարում է ամենօրյա առաջադրանքներ, բայց չի գիտակցում, թե ո՞րն է սովորելու նպատակը, ապա նա չի կարողանա լավ պատկերացնել իր կատարած աշխատանքի իմաստը և գնահատել սեփական առաջընթացը: Այդ բացը լրացնելու համար նա պետք է սեփական ուժերով կամ ուսուցչի օգնությամբ փորձի ըստ էության հասկանալ այն ուսումնական նպատակը, որին հասնելու համար ինքը ջանքեր է ներդնում:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում է իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու համար կարևոր առանձնահատկություն է:

Բերենք ինքնգնահատման կազմակերպման մի օրինակ.

Ուսուցիչը հանձնարարում է կարճ ժամանակի համար նախատեսված առաջադրանքներով թեստ: Թեստի կատարման համար նախատեսված ժամանակը լրանալուց հետո ուսուցիչը բացատրում է, թե ինչպես յուրաքանչյուր աշակերտ գնահատի իր կատարածը, պատասխանի ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համարի մոտ գրելով տառ՝

«Ճ», եթե ճիշտ է կատարել առաջադրանքը,

«Կ», եթե կասկածում է լուծման ճշտության վրա,

«Չ», եթե չի կարողացել կատարել առաջադրանքը:

Ինքնագնահատման այս վարժությունից հետո ուսուցիչը հավաքում է պատասխանների ձևաթղթերը: Դրանք համեմատելով՝ ընտրում է այն առաջադրանքները, որոնց համար առավել շատ թվով աշակերտների պատասխաններում է նշված «Չ» տառը, և դրանք քննարկում դասարանում:

Աշակերտի ինքնագնահատման գործում կարևոր դեր է վերապահված ուսուցչին: Նա պետք է օգնի աշակերտին հասկանալ, թե ինչին պետք փորձի հասնել աշակերտը: Դա, անշուշտ, ունի դժվարություններ, որովհետև առաջադրանքն ունի իր նրբությունները և դրա նրկայացումն ու հասկանալը կարող է դժվարություններ առաջացնել՝ ելնելով նաև ուսուցչի մտածողության և աշակերտի ընկալման սուբյեկտիվ բնույթից: Դժվարություններ ծագելիս՝ ուսուցիչը կարող է պարզորոշ ներկայացնել ընդհանուր նպատակի փոքր մասերը:

Նպատակը հասկանալի դարձնելուց հետո, ուսուցչի հաջորդ խնդիրը կլինի պարզաբանել այն անելիքները, որոնք աշակերտին կհասցնեն հաջողության: Ինքնագնահատման ուղղությամբ ուսուցչի կատարելիք կարևոր աշխատանքներից է աշակերտին թույլ տալկազմել վեջնական նպատակի պատկերն իր առանձին քայլերով:

Եթե աշակերտը հասնի ինքնագանահատման որոշակի մակարդակի, ապա դա նրան հնարավորություն կտա արժեքավոր դատողություններ անել իր և այլոց ձեռքբերումների վերաբերյալ, համեմատել իր ներկա և պահանջվող մակարդակները, հեշտությամբ վերացնել սեփական թերությունները:

Ինքնագնահատման աշխատանքներում աշակերին օգնելու ուսուցչի ցանկության իրականացմանը հաճախ խանգարում է ժամանակի սղությունը:

9. Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատումն արվում է զույգերով կամ խմբերով աշխատանքի միջոցով: Այստեղ դրսևորվում է դասընկերոջ թույլ տված սխալները տեսնելու և ճիշտ պատասխանը հիմնավորելու կարողությունը, աշակերտի ճիշտ մտածողությունը, ուրիշին օգնելու պատրաստակամությունը և բարյացակամությունը: Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի աշակերտի առաջընթացը խթանող հետադարձ կապ: Դա կօգնի աշակերտին գնահատել իր ընտրած ուղու ճշտությունը: Այդպիսով, նա տեղյակ կլինի, թե ուսումնառության ընթացքի յուրաքանչյուր հատված ինչպես է անցել, հետևաբար, կիսամյակի վերջում ստացած գնահատականը նրան անակնկալի չի բերի:

Ինքնագնահատումը կամ փոխադարձ գնահատումը կարելի է իրագործել գնահատմանն թերթիկով, որն արվում է խմբային կամ զույգերով աշխատանքներից հետո:

Փոխադարձ գնահատումն ենթադրում է նաև աշակերտի ինքնահամեմատությունը դասընկերոջ հետ: Դա առաջընթացը խթանող հանգամանք է: Փոխադարձ գնահատումն աշակերտների աստիճանակարգման նպատակ չի հետապնդում, քանի որ այս դեպքում նրանք իրենց համեմատում են ուրիշների հետ: Հնարավոր է, որ այդ աշխատանքի արդյունքում «լավ» կամ «վատ» աշակերտի նկատմամբ նախնական պատկերացումը փոխվի:

Փոխադարձ գնահատում կարելի է անել տնային աշխատանքներով: Օրինակ, աշակերտներին հանձնարարվում է տանը գրել օրինակներ և պարզաբանել, թե ինչպես կյանքում կիրառել եռանկյունների նմանության վերաբերյալ գիտելիքը: Ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի համար ընտրում է նրա աշխատանքն ստուգող այլ աշակերտ:Փախադարձ գնահատումը կարող է ավելացնել սովորելու արդյունավետությունը, քանի որ աշակերտին մղում է մտածել աշխատանքի հիմնավորվածության ու փաստարվածության մասին:

Անդրադառնալով թեմատիկ գրավոր աշխատանքներին, չենք կարող չանդրադառնալ տրման կարգին:

Ինչպես գիտենք շատ հաճախ թեմատիկ գրավոր աշխատանքերը տրվում են թեստերով, որտեղ զետեղված են ընտրովի պատասխաններով հարցեր կամ որոշ հարցեր ընտրովի պատասխաններով, որոշ հարցեր ընդարձակ պատասխաններով:

Եզրակացություն

Ուսումնական արդյունքների գանահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողությունների զարգացման աստիճանը ըստ ուսմնական առարկաների՝ չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

Այսպիսով, ուսուցչի իմ պրակտիկայի ընթացքում տարբեր դասարաններում կատարել եմ փորձարարական դասեր՝ տրվել համապատասխան թեստային գրավոր աշխատանքներ, մի դեպքում ընտրովի պատասխաններով, մյուս դեպքում ընդարձակ պատասխաններով, արդյունքները ամփոփելով եկել եմ այն եզարահանգման, որ ընտրովի պատասխաններով տարբերակով գրելու դեպքում աշակերտները ստանում են ավելի բաձր գնահատական, քան ընդարձակ պատասխաններով Այսինքն, գիտելիքների առկա մակարդակը ճշգրիտ չիերևում:

Գրականության ցանկ

1. Միքայելյան Օ., Ընթացիկ գնահատումների նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Ուսուցչի ձեռնարկ, ԿԱԻ, Երևան, 2010:
2. Հերթական ատեստավորման ենթակա մաթեմատիկայի ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացների բովանդակային չափորոշիչներ, ծրագիր և ուղեցույց:

ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն, կրթության ազգային ինստիտուտ,Երևան 2011:

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան, 2008:
4. ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոն, Ուսուցիչների վերապատրաստման կենտրոն, Երևան «Անտարես» 2009: